



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

թիւ 35 .

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԵՐԵՍՈՒՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ

Տ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՑԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻԻԷԼԵՏԻՍԵԱՆ

— 1871 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԼԵ.

Յ ԳԵԿՏԵՄԲԵՐ 1871

ՆԱԽԱՅԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. (Առժամանակեայ կարգեալ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Ատենական կանոնադրութիւն :
- 2° Ընտրութիւն Ազգ. վարչութեան կրօն. ժողովոյ :
- 3° Համարատուութիւն Ազգ. վարչութեան Քաղ. ժողովոյ :
- 4° Տեղեկագիր Գաւառական հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովոյ :
- 5° Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Գլուխ Ա :
- 6° Կեդրոնացումն եւ Ազգակեդրոնացումն :

Պատենը բանալու ժամը կարի իսկ անցած էր արդէն, բայց օղոյն սաստկութեանը պատճառաւ սակաւաթիւ երեսփոխանք միայն կային 'ի ժողովարանն, եւ Գիւանին վրայ Մէրեւէմ-Գուլի էֆ. էն զատ ոչ ոք կերեւէր :

Նախագահ Սրբազան, ըստ սովորութեան ներկայից թուով ատենան բանալու հարկը յիշեցնելով հրաւիրեց զՂազարոսեան Ք. էֆ. իբր երկրագոյն երեսփոխան՝ առժամանակեայ ատենապետութեամբ ատենան բանալու :

Հետեւապէս ատենան բացուեցաւ ժամը 8 3/4 ին 'ի ներկայութեան 28 երեսփոխանաց, որոց թիւը հետզհետէ 39ի հասաւ, առանց մեծագոյն մասի գոյացման :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէպէտ ըստ սովորութեան նախ Լ.Բ. եւ Լ.Գ. նստից ատենադրութեան վը-

րայ պէտք է հրաւիրեմ ժողովը 'ի դիտողութիւն եւ ազա երեսփոխանական նորոգ ընտրութեանց տեղեկագիրը ներկայացնեմ 'ի վաւերացումն, զոր Գործադիր Յանձնաժողովն ուղղած է Գիւանին, սակայն նկատելով որ մեծագոյն մաս չունենալուս պատճառաւ չափաի կրնամք վերջ տալ այս խնդրոց եւ անոնց վրայ անդրադառնալու պիտի պարտաւորիմք, Գիւանը պատշաճագոյն կը համարի խնդրոց կարգին հետեւելով ժողովոյ ու շարքութիւնն Ատենական կանոնադրութեան վրայ հրաւիրել, որ առաջին խնդիր է :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Գիւանը պարտի՞ օրուան կարգէ առաջ նախընթաց նստի ատենադրութիւնքը ժողովոյ դիտողութեան ենթարկել, ինչպէս օրէն կղած է Քնդհ. ժողովոյ որոշմամբ, թէ եւ մեծագոյն մասալ չունենամք :

նեղ կը նշանակէ, զի անկախ հողերը կառա-
վարութիւն մերը չէ. Հայոց կղերը՝ խորհրդա-
տու է ՚ի կրօնականին, այլ ոչ իշխող մարմին,
ուստի եւ մեր աւանդութիւն խառն ժողով
կը պատուիրէ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Մարկոս էֆ. այն-
չափ ծանրացուց խնդիրն որ եկեղեցական
սկզբունքի խնդիր մը յարոյց, զոր Տ. Մատթէոս
Վարդապետ ընդունեց բայց յետոյ մեղանշեց,
եթէ մեր եկեղեցւոյ սկզբունքը զատ կրօնա-
կան մարմին ունենալու դէմ է, ինչպէս կը
հաստատէ Մարկոս էֆ. ինչպէս Տ. Մատթէոս
Վարդապետ կառաջարկէ առ այժմ ըստ առաջ-
նայն կրօն. ժողով կազմել: Ես կրսեմ որ նը-
կատողութեան անունը այս խնդիրը, եւ կա-
մաւ սոսկալի մեղքի մը մէջ չընկնիմք. ամեն
բուն կրնամք ընել, բայց ինչ որ եկեղեցին
մեղ աւանդած է, չեմք կրնար փոխել: Բարե-
բազդ է ընդհ. ժողովն որ ցարդ չէ լուծեր
կրօն. ժողովոյ խնդիրն, եւ ես դժբաղդ եմ որ
անոր ընտրութեան. առաջնութիւն ունենալը
պաշտպանեցի: Արդ՝ Սրբազան Պատրիարքը
կրնայ, ինչպէս ըրաւ ցարդ, քիչ մ'ատեն եւս
ինքնին հողալ կրօնական գործերն եւ մեք
չեմք կրնար, մինչեւ որ չվիճարանեմք,
չքննեմք, չհամոզուիմք ու չորոշեմք, կրօն. ժո-
ղովոյ ընտրութեան ձեռնարկել: Սահմանադ-
րութիւնը կրօնական մասին Ազգին ունեցած
ներկայ ձեւն ՚ի գիր առած է, բայց եթէ մեր
աւանդական ձեւն այդ չէ, ինչպէս կրսէ Մար-
կոս էֆ. ինչո՞ւ կուրորէն ընդունինք Սահմանադ-
րութեան գրածը: Սահմանադրութիւնն աւե-
լի բանաւորաց հրամանն է, քան թէ ժողո-
վորդեան ձայնը: Բ. Գուռն Յանձնաժողով
մ'է կազմեր իր ուզած անձերէն, որք եկեղեց-
ւոյ աւանդութեանց եւ սկզբանց անդէտ՝ ու-
ղածուն պէս Սահմանադրութիւն մը շիներ եւ
Ազգը կապեր են: Ըսածիս ստուգութիւնը պատ-
մութիւնն ալ կը հաստատէ: Եկեղեցականք
պարտին մանաւանդ ձայն բառնալ, զի նորա
ուխտ ունին Հայաստանեաց եկեղեցւոյ աւան-
դութիւնները պահպանելու. ինչպէս Սահմա-
նադրութիւնը նախամեծար պիտի կրնան հա-
մարել, եթէ եկեղեցւոյ հին աւանդութեան
մը դէմ է, ուստի ես պիտի առաջարկեմ որ
Սահմանադրութեան այս կէտը ջնջուի:


ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ինչպէս որ ըսի Մար-
կոս էֆ. ի խօսքերուն բոլորովին համամիտ եմ.
Եւ արդարեւ ո՞վ որ Ազգին կրօնքին եւ կրօ-
նական հին անդիցր տեղեակ է, հարկաւ ազէկ
գիտէ որ մեր արդի կրօն. ժողովոյ կազմութեան
գրութիւնը զեղծու մ'է, որ մուտ գտեր է մեր
մէջ: Ինչպէս Տ. Մատթէոս Վարդապետ հաս-
տատակց, այս նոր եւ օտար գրութիւնը կլիկիկոյ
ժամանակէն սկսած է, երբ Արեւմտեան եկե-
ղեցին յարաբերութիւն ունեցաւ մեր հետ.
Բայց այնուհետեւ երբ Պօլիս Պատրիարքու-
թիւն հաստատեցաւ, դարձեալ մեր հին աւան-

դութիւնն յարգուեցաւ եւ մինչեւ մեր տղայու-
թեան օրերն անսփոփոխ մնաց: Բոլոր մեր ազ-
գային ժողովները կրօնականներէ եւ աշխար-
հականներէ խառն կը լինէին: Մինչեւ առիկ
23 տարի յառաջ երբ կրօն. ժողով գումարէր
երկու կրօնադէտ աշխարհականներ կը գրու-
նուէին անոր մէջ, որք հաւասար ձայն ունէին
կրօնականաց հետ. ետքէն, այսինքն մօտ ա-
տեններս, կաթողիկոսութեան կամ ճիշտութեան
նութեան սկզբունքին տեղի տրուելով այս
զեղծու մն երեւան եկած էր, զոր Սահմանադ-
րութեան մէջ ալ մտցուցին: Հիմայ բարեբաղ-
դարար Սահմանադրութեան վերաբնութիւն
պիտի ընեմք, ես ալ համամիտ եմ որ այն ա-
տեն ուղղեմք այս կէտը: Սակայն զալով այ-
սօրուան ընտրելի կրօն. ժողովոյն, առժամա-
նակեայ ժողով մ'ընտրելու չեմ ընդգիմանար:
Ես ոչ Օղսէն էֆ. ի պէս կը զարնուրիմ եւ մա-
հացու մեղք կը ճանչեմ միմիայն կրօնականներէ
առժամանակեայ ժողով մը կազմելը, եւ ոչ
ալ Պէկեան էֆ. ի պէս՝ արդի սխալ գրութիւնը
մերժելու մէջ վտանգ կը տեսնեմ:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Պապականութիւն ըստւած
սկզբունքէն ես այնքան չեմ վախնար, որքան
կը վախնամ այն ճիգէն որ կը թափուի նոր
բաներ երեւան հանելու համար: Եւ ինչ կը
նշանակէ այս. զինուորատուութեան խնդիր կը
յարուցանեն, նոր բան. Սոյ խնդիր, նոր բան,
կրօնականէ եւ աշխարհականէ խառն ժողով,
նոր բան: Ես, ինչպէս որ ըսած եմ արդէն,
դարձեալ կրսեմ թէ՛ հպատակ ազգի մը համար
քայլ փոխելը վտանգաւոր է, մեր ազգը պէտք
է միշտ պահպանողական գիրք ունենայ եւ
մինչեւ որ ապահովութիւն ձեռք չըրեր, քայլ
չառնու: Կրսեն թէ եկեղեցականք եւ աշխար-
հականք մէկտեղ ժողով կրնէին եւ հիմայ այդ
սովորութիւնը վերցած է. ո՞վ կրսէ թէ վերցած
է. ինչ է ուրեմն այս ընդհ. ժողովը. զուտ
կրօնականներէ բաղկացեալ ժողով մ'ունենալու
հարկը գուցէ ներկայ քաղաքականութենէն
ժազած ըլլայ. վերջապէս լաւ մտածելու եմք
որպէս զի սխալ քայլ չառնուիմք: Ես իմ փաս-
տերս պիտի պատրաստեմ եւ յառաջիկայ նստին
ներկայացնեմ:

Օրը չափազանց տարածամած լինելով, երես-
փոխանք մէկ կողմանէ սկսան մեկնիլ եւ Ատե-
նապետ էֆ. Ատեանը գոցեց ժամը 4ՉՅ4 ին,
վիճարանութեան շարունակութիւնը յառաջիկայ
նստին թողլով:

ԱՏԵՆԱՊԵՏ ԱՏԵՆԱԳՊԻՐ
Օ. Գ. ԱՊՐԱՅՈՍԵԱՆ Յ. Լ. ՄԵՐՆԵՄ-ԳՈՐԿԻ



Կը վախնար... Բաւ ոչ ինչ ոչ այլ... (Handwritten notes at the bottom of the page)

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը գտնուի
Եկեղեցեաց Ընկալները :